

$$\begin{array}{r} 338.1 \\ \hline 34 - 25 \end{array}$$

17 FEB 2010

ՅԱԿՈՎԼԵՎ

1934 թվականի
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(ԽՍՀ Միուրյան Կենտրոնական 4-րդ հաստոքանում
բնկ. Յակովլևի տված զեկուցումից)

338.1
34-25



1934

ՅԵՐԵՎԱՆ

09.07.2

29972

338.1

30-25

1008
35089

3921

ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Առաջին և հիմնական խնդիրը, վոր ներկայումս կանգնած է մեր առաջ — այդ տրակտորների վերանորոգումն եւ դարձնացանի պլանի կատարման հաջող ընթացքն ապահովելու, ձեռք բերված հաջողությունների վրա չհանգստանալու, այլ այդ հաջողությունները 1934 թվականին եւ ավելի զարգացնելու համար, անհրաժեշտ և ժամանակին ու լավորակ կերպով վերանորոգել արակտորները։ Դժբախտաբար վորոշ գեպքերում զյուղատեսական աշխատողները նույնիսկ մի շարք մարզերում, խնդիրն այնպես են հասկացել, թե քանի վոր կոլտնտեսությունների ամրացման գործում հաջողվեց զգալի հաջողություններ ձեռք բերել, հաջողւեց ավելացնել արտադրանքը, կատարել հացամթերման սլանները, մնացածն ինքնիրեն գլուխ կտա, ինքնահոսի կարգով առաջ կդնա. մինչդեռ ինքնահոսով բան չի դուրս գա, նույնիսկ մի այնպիսի. թվում ե, թե համեմատաբար հասարակ գործում, ինչպիսին տրակտորների վերանորոգումն ե:

Այստեղ մեր առաջ կանգնած են հետեւյալ հիմնական խընդիրները. տրակտորների վերանորոգումն ավարտել սահմանված ժամկետին՝ մարտի մեկին, ապահովել տրակտորների լավորակ վերանորոգումը, վորպեսզի 1934 թվականին չկրկնվեն մի շարք ՄՏ կայաններում և մեքենատրակտորային արհեստանոցներում անցյալ տարում գոյություն ունեցող՝ վերանորոգման նկատմամբ հանցագործ — անփույթ վերաբերմունքի գեպքերը։ Մեր մեքենատրակտորային արհեստանոցները ներկայումս ունեն այս խնդիրներն անպայման կատարելու համար անհրաժեշտ բոլոր հնարավորությունները։

ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Տրակտորներ վերանորոգելը դեռ քիչ ե. նրանց հարկավոր և ավելի լավ ոգտագործել, քան 1933 թվականին։ 1934 թվականին մենք անպայման կարող ենք լուրջ քայլ կատարել դեպի առաջ

այն տեխնիկայի յուրացման գործում, վորն ունեն մեր ՄՏ Կայանները և մենք կանենք այդ քայլերը: Ներկայումս մեր ՄՏ Կայաններն ունեն 122 հազար տրակտոր, 11.500 կամբայն, 1350 բեռնատար ավտոմոբիլ, մոտ 3.000 մարդատար ավտոներ, 17 հազարից ավելի շարժիչներ ու լոկոմոբիլներ, 50,000 կարիչ մեքենա, 2.000 հիմնական, միջին ու ընթացիկ վերանորոգման արհեստանոցներ: Սակայն այդ տեխնիկան առայժմ միանգամայն անբազար չափով և ոգտագործվում, ըստ վորում այդ ոգտագործումը տարբեր է զանազան յերկրներում ու մարդերում: Յեթե մենք վերցնելու լինենք թեկուղ միայն այն՝ ինչ ներկայումս արդեն ձեռք ե բերված, ապա պետք է ասել, վոր մենք առանձին յերկը ընթանում միջև հսկայական տատանումներ ունենք տրակտորների ոգտագործման ասպարիգում: Յեթե այդ ցուցանիշները վերցնելու լինենք ըստ առանձին յերկների ու առանձին ՄՏԿ-ների, ապա այդ տատանումներն ավելի մեծ կլինեն. հենց միայն յուրաքանչյուր տրակտորի կողմից զարնանացանի ընթացքում կատարված աշխատանքի չափի մեջ մեծ տատանում լինելու փաստը ցույց է տալիս, թե չորսագործված կարողության ինչպիսի հսկայական աեզերվածք ունենք մենք տրակտորների ասպարիգում: Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի վորոշումը տրակտորների շահագործման մատին, դեռևս հարկ յեղածին պես չի հասել յուրաքանչյուր ՄՏ Կայանի: Յեթե հարց տաք ՄՏ Կայանի դիրեկտորին, թե ինչ վիճակումն ե տրակտորային պարկի շահագործման վերաբերյալ Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի վորոշման կենսագործումը, ապա նա կպատասխանի, թե ըրուր բրիգադաներում մշակել ենք այդ վորոշումը»: Իսկ յեթե հարցնեք տրակտորիստին, թե նա գիտե՞ արդյոք կանոնադրության համաձայն յե՞ր պետք ե կատարվի տրակտորների ստուգումը, թնդամկեաներում պետք ե փոխվի յուղը, յե՞ր պետք ե մաքրվեն առանցքականները և այլն, ապա դուրս կգա, վոր այս ինդիքներում նրանցից յուրաքանչյուրն իր կարծիքն ունի՝ յերբեմն ինարկե, վոչ վատ, սակայն համենայն դեպս այն, ինչ պահանջում ե որենքը՝ նա չի իմանում: Մինչդեռ տրակտորների ոգտագործման և աշխատանքի բարելավման հարցը—աշխատանքի հաստատուն ռեժիմի հարց է:

ՄՏ Կայանի դիրեկտորը հանդիսանում է անտեսության կազմակերպիչը:

Յեթե նա սովորի այդ դերը կատարել ինչպես հարկն է, ապա տրակտորը հեշտությամբ կկարողանակ հեկտար լրացուցիչ աշխատանք կատարել յուրաքանչյուր տարի: Այդ ավելի մեծ չափով վերաբերում ե վասելիքի ոգտագործմանը: Վոր վառելիքը խայտառակ ձևով ե ոգտագործվում վոր նրան չեն գնահատում, թափթփում են, գողանում են ովքեր ուղում են, այդ գիտեն բոլորը: Դրան վերջ դնելու համար, կառավարության կողմից բարձրացվեցին վառելիքի գները: Հենց միայն այդ պետք է ստիպի գյուղատնտեսական մարմինների վողջ սիստեմին իսկական ձևով ստուգելու իրենց աշխատանքը վառելիքը տնտեսելու տեսակետից: Վառելիքի լավ, անտեսված ծախսումն այս տարվա գարնանացանը հաջողությամբ անցկացնելու նախապայմաններից մեկն է հանդիսանում:

ՅԱՆՖԻ ՆԱԽՍՊՐԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏԵԼ ԶՄՐԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Յես անցնում եմ հետեւյալ հարցին՝ ցանքի նախապատրաստության հարցին: Մինչեւ այժմ կոլանտեսությունների ու ՄՏԿ-ների մեծ մասում մենք փաստորեն կորցնում ենք առաջին ամենալավ որերը, յերբ կարելի յե վարել ու ցանել, այդ որերը ծախսելով այնպիսի աշխատանքների վրա, վորոնք հեշտությամբ կարելի յե կատարել ձմրան ընթացքում: Մենք կինդընք կենտրոնակոմի նստաշրջանից, վոր վորպեսդի ձմրան ընթացքում մինչ զարնան բացվելը՝ անպայման կատարվելիք աշխատանքներ ընդունվեն հետեւյալ աշխատանքները.

Լիովին անսակավորել ու դառել սերմացուն.

Կարգի բերել և փորձնական դաշտ դուրս գալու միջոցով ստուգել վարի, ցանքի մեքենաները, ձիասարքերը, սայլերը.

Նախապատրաստել դաշտային կայանները գյուղից հեռու գտնվող բրիգադների համար, սահմանել վոչ միայն ամբողջ կոլանտեսության ցանքի ճշգրիտ պլանները, այլև այն, թե ինչ ե ցանքելու ցանքաշրջանառության յուրաքանչյուր դաշտեւմ, կոլանտեսային յուրաքանչյուր բրիգադի հողամասում:

Ստուգել և ստույգ կերպով սահմանել յուրաքանչյուր բրիգադի անձնական կազմը, վորպեսդի յուրաքանչյուր կոլանտեսական գիտենա իր բրիգադիրին և յուրաքանչյուր բրեգադիր ստույգ

կերպով իմանս իր բանակը, վորպեսզի մարդիկ այս ու այն կողմ-
չընկնեն, միմյանց չխանգարեն:

Արտադրանքի որինակելի նորմաների հիման վրա, արտա-
դրանքի նորմաներ սահմանել յուրաքանչյուր կոլտնտեսությու-
նում առանձին, այն հաշվով, վոր յուրաքանչյուր կոլտնտեսա-
կան իմանա, թե վորքան և ինչ աշխատանքի համար աշխարեր
պետք ե ստանա:

Մի խոսքով այն ամենը, ինչ հնարավոր ե կատարել ձմրան
ընթացքում, անհրաժեշտ ե կատարել մինչև գարնան բացվելը:
Այս տարի մենք պետք ե գարնանացանի առաջին իսկ որվանից
դաշտ դուրս գանք կազմակերպված բրիգադներով, վերանորոգ-
ված գործիքներով, իրենց անելիքը լավ պատկերացնող բրիգա-
դիքներով, լավ տեսակալորդած ու ընտրած սերմացույով, ուղղա-
կի կաղմաղասրաստ վիճակում: Այդ նշանակում ե անպայման շա-
հել 5-7 որ և այն ել բերքատվության համար չափաղանց թան-
գարժեք գարնանային առաջին որերից:

ԳԼԽԱՎՈՐԸ—ՑԱՆՔԻ ԲԱՐՁՐ ՎՈՐԱԿՆ Ե

Ճանքի վորակի հիմնական պահանջները բոլորին հայտնի
յն: Նրանք ստուգված են տասնյակի-հազարավոր կոլտնտեսական-
ների փորձով, ավելին. նրանք ստուգված են գյուղատնտեսական-
արտադրության բազմաթիվ տասնամյակների փորձով: Խոսքն առա-
ջին հերթին այն մասին ե, վորպեսզի նախ ել ավելի կրծատվեն
կոլտնտեսություններում ցանքի ժամկետները՝ հատկապես հացա-
հատիկային շրջաններում. յերկրորդ՝ վորդ գարնանավարը կատար-
վի բացառապես կորպուսային գութաններով այնպես, վոր այս-
տարի վերջին հարվածը հասցվի յերեսավարին: Յերրորդ՝ ցանքի
միմիկայն իսկապես ստուգված, տեսակալորդած սերմացույ իրա-
տորեն պահպանելով ցանքի սահմանված նորմաները: Զորքորդ՝
քաղհանվեն բոլոր մոլախոտերով պատած հացահատիկային ցան-
քերը: Այս բոլոր ձեռնարկումներն այս տարի մատչելի յեն մեր
կոլտնտեսությունների գերակուող մեծամասնության համար: Դաշ-
տային աշխատանքների վորակի նկատմամբ վերահսկողություն
սահմանելը, վորն սկսվեց իրենց իսկ կոլտնտեսականների նախա-
ձեռնությամբ, այս տարի մասսայական կիրառում գտավ: Վերա-
հսկողությունը կատարվում եր ամենաբազմապիսի մեթոդներով:

Կոլտնտեսության վարչություններին կից կային վորակ ստուգող
հանձնաժողովներ, և աշխատանքն ընդունող հատուկ հանձնաժո-
ղովներ՝ գյուղխորհուրդներին կից Վորակի տեսչությունները՝ կազմ-
ված ծերունի կոլտնտեսականներից, բերքի կոմիսարիան պա-
հակախմբերը և այլն: Հստ եյության այդ տարրեր անունների տակ
թագնված ե միևնույն բանը. մարդիկ չեն բավարարվում նրա-
նով, վոր ամենք ցանել են վորոշ տարածություն, այլ հաշվետվու-
թյուն են պահանջում բրիգադիրից, վար անողից, ցանք կատա-
րողից այն մասին, թե նրանք ինչպես են կատարել ցանքը: Այս
կապակցությամբ, լայն ընդհանրացման և արժանի այն փորձը,
վոր կիրառեցին այս տարի մեր լավագույն կոլտնտեսականները.
այդ առանձին կոլտնտեսականների ու բրիգադիրների աշխա-
տանքի գնահատումների իջեցումն ե, վորոնք աշխատանքի ցածր
վորակ են տալիս՝ սահմանված ազրութեանիկական պահանջների
համեմատությամբ, լավ աշխատող հարևանների աշխատանքի վո-
րակի համեմատությամբ: Խնդիրն այն է, վոր ապահովի կոլտն-
տեսային աշխատանքի վորակի բարձրացումը բոլոր ՄՏՀ-ներում
ու կոլտնտեսություններում, գարնանը բարելավվի հողի մշակումը,
դրանով իսկ ապահովի ու նախապատրաստվի հացահատիկային
կուլտուրաների բերքատվության նոր և լուրջ աճումը:

ԲԱՄԲԱԿԻ ՄԱՍԻՆ

Բամբակն այնպիսի մշակույթ ե, վորն ամենից ավելի քիչ ե
հաշտվում այն բանի հետ, վորպեսողի նրա ցանքի և մշակման
ժամանակ մարդիկ հորանջին: Դուք զիտեք, վոր կառավարու-
թյունը խնդիր ե դրել առաջիկա տարում վոռոգվող հողամասերի
յուրաքանչյուր հեկտարից ստանալու առնվազն 8,4 ցենտներ
բամբակ: Վորպեսդի պարզ լինի, թե վորքան իրազործելի յե այդ
խնդիրը, թե վորքան մեր ձեռքումն են դրա իրազործման հնա-
րագորությունները, յես կմատնանշեմ այստեղ մի քանի հիմնա-
կան փաստեր: 1934 թվականին բամբակի ցանքը կատարելիս
մենք հետեւյալ առավելությունները կունենանք, 1933 թվին բամ-
բակի համար կատարված ե ուղիղ յոթը հարյուր հիսուն հազար
հեկտար ցեղ՝ 1932 թ. յերկու հարյուր հիսուն հազար հեկտարի
փոխարեն: Ուղբեկատանի ՄՏ կայանները 1933 թ. ցեղ արված
արտերում բամբակ ելին ցանել իրենց բամբակի տարածություն-

հերի միայն վեցերորդ մասում: 1934 թ. բամբակի գրեթե կեսը ցանվելու յե ցել արած հողերում: Զե՞ վոր հենց միայն ցելը, մանավանդ լավ հերկվածը, անպայման տալիս և բերքատվության տասը, նույնիսկ ավելի տոկոս աճում:

Յերկրորդ առավելությունը ցանքն արագացնելու հնարավորությունն է: Ցանքի ուշացումն առանձնապես վտանգավոր ե բամբակի համար: Յերրորդ լծակը, վոր մենք լիովին պետք ե ոգտագործենք 1934 թվականի բամբակի ցանքը կատարելիս—հողի մշակման հետագա բարելավումն է: Չորրորդ լծակն և լավագույն վորոգումը: Վերջապես հինգերորդ լծակը, վորոյ յես համարում են կարևորագույնն իր նշանակությամբ—պարարտացումն է: Մենք ԽՍՀՄ-ի հենտգործկոմին պիտի խնդրենք, վորպեսզի զեկուցման առթիվ ընդունված վորոշմամբ ՄՏ Կայանների դիրեկտորների, հողային որդանների բոլոր աշխատողների վրա հանքային պարարտանյութերի ոգտագործման համար նույնպիսի պատասխանատվություն գրվի, ինչպես արակտորների ժամանակին, բարձրորակ նորոգման ու նրանց ոգտագործման համար: Մրանք են այն գլխավոր լծակները, վորոնք մենք կարող ենք լիովին ոգտագործել 1934 թվին, վորպեսզի առաջարրված խնդրը կարողանանք կատարել Մեր գործն այն և, վորպեսզի մաքառենք վոչ միայն բամբակի բերքատվության գծով առաջարրված խնդիրը կատարելու համար, այլև գերակատարենք այն:

Կ Ա Գ Ր Ե Ր

ՄՏ Կայանների աշխատանքի հաջողությունը մեծ չափով կախված կլինի այն բանից թե, վորքան ՄՏ Կայանի դիրեկտորը և քաղաքանի պետը յուրացը են այն հիմնական կազմակերպչական կանոնը, վոր մարդկանց ընտրությունը վճռում և գործի հաջողությունը: Այն բանից, թե ինչպես նոր ՄՏ Կայանների դիրեկտորները կը նորեն մարդկանց, մենք վորոշելու յենք, թե վորքենով լավ ե դիրեկտորը, արդյոք հաջող ենք կատարել ավյալ ընտրությունը, թե անհաջող:

Այս դեպում յերկրորդ հարցը ԲՈՒՀ-երն ավարտած յերիտասարդ մասնագետներին ոգտագործելու հարցն ե: Նրանց շատ նշանակելի մասը նստել եր ապարատներում թե կենտրոնական և թե մարզային՝ և չեր հասել մինչեւ արտադրությունը: Կենտրոնի

համապատասխան ցուցումները կատարելու նպատակով մենք արձատապես փոխեցինք այդ կարգը և կարողացանք այնպես անել վոր ԲՈՒՀ-երն ավարտողներն արժմ հիմնականում անմիջականորեն գնում են ձեռնարկություններում աշխատելու:

Տրակտորիստ կաղը երի նկատմամբ խնդիրն այն է, վորպեսզի ՄՏ Կայանին կից կազմակերպենք մինչև յոթանասուսնազարդ տրակտորիստների պատրաստման գործը, տալով նրանց վոչ թե յերկամսյա ուսումն այլ ծայրահեղ զեպքում: Ծորսամյա, այդ գործում ներգրավելով ՄՏ Կայանում յեղած տրակտորիստների ամբողջ վորակյալ կազմը:

Մի քանի խոսք առանձնապես հաշվետարի մասին: Համաձայն նստաշրջանի անցած տարվա վորոշման՝ կատարվեց հաշվետարների ստուգում: Այդ ստուգումը ցույց տվեց, վոր նրանց շարքում տեղ են գտել մեծ թվով անհարազատ տարրեր և ցածր վորակ ունեցողներ: Կոլտնտեսությունների հաշվետարների ստուգումը և նրանց վորակի բարձրացման աշխատանքն ամենայն խստությամբ պետք ե շարունակել և այս տարի:

Փորձը տառացի կերպով ամեն որ սովորեցնում է, վոր կաղը երի ընտրության գործի նկատմամբ արհամարանքը հանդիսանում է հողային որդանների ամբողջ սիստեմի գլխավոր արատը: Վորպեսզի ինչպես հարկն և անցկացվի ամեն մի գյուղատնտեսական կամպանիա, պետք է, վոր մեր բոլոր որդանների զեկավարները ներքենց մինչև կերեւ կարգերի ընտրության և ստուգման գործը դարձնեն կարևորագույնը, յեթե վոչ հիմնականն իրենց աշխատանքում, ինչպես այդ պահ սնջում և նաև ընկ. Կազանովիչի զեկուցման թեղերի նախագիծը:

ՀՈՂԱՅԻՆ ՈՐԴԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ

1934 թ. ամբողջ գյուղատնտեսական աշխատանքը, առաջին հերթին գարնանացանը հաջողությամբ կատարելու կարևորագույն խնդիրն այժմ հանդիսանում է ապարատի աշխատանքի բարելավումը, կազմակերպչական աշխատանքի բարեկավումը: Այդ ե խնդիրի առանցքը: Խնդիրն այն է, վոր «ընդհանուր» և վերացական ղեկավարությունից անցնենք կոնկրետ ղեկավարության, «ընդհանուր» բանաձևերից անցնենք գործի մանրամասությունների

և տեխնիկայի ուսումնասիրության ու ճանաչման վրա հենված ողբարատիվ վրոշումների, արտադրության կառավարման գործում ստորին ողակների (ցեխ, հողամաս, ձեռնարկություն, կոլտնտեսություն, գյուղ, ՄՏ Կայան, խորհուտեսություն և այլն) հետ սրեա, կենդանի կապ ստեղծենք»: Յերկրորդ՝ ուժեղացնենք ղեկավարների անձնական պատասխանատվությունը թե կուսակցական և թե խորհրդային գծով նրանց հանձնարարված գործի նկատմամբ, վերացնենք փունկցիոնալությունը, դիմադրությունն աշխատանքում, հաստատելով խիստ միաձայնությունն: Յերրորդ «սահմանել կուսակցության ու կառավարության ղիրելտիվների կատարման սիստեմատիկ, մանրակրկիտ ստուգում, վորակազի կատարման ստուգման գործով զրադի անձամբ կաղամակերպության, հիմնարկության, ձեռնարկության ղեկավարը, վորակազի կատարման ստուգումն ապահովի կուսակցական և խորհրդային կարգապահությունը» (17-րդ կուսամագումարի առթիվ Համկոմկուսի կենտկոմի թեղերը կաղամակերպչական հարցերի շուրջը): Ներկայումս Համկոմկուսի կենտկոմի զյուղատնտեսական բաժնի ղեկավարությամբ մենք մշակում ենք ժողկոմատի կաղամակերպչական կառուցվածքի փոփխման հարցերը, յենելով ապարատի այնպիսի իրական կառուցվածքի անհրաժեշտությունից, վորով ապահովվեր կուսակցության պահանջների կատարումը յերկրի մի այնպիսի կարևորապատճենից, վորակազին և հողագործությունը:

ՄՏ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս տարի, յերր ՄՏ Կայանները պետք ե քառասուն հինգ միլիոն հեկտար ավելի ցանք կատարեն, ՄՏ Կայանի և կոլտնտեսությունների միջն կնքված պայմանագիրը մի կարևորագույն զենք ե դառնում ՄՏ Կայանի աշխատանքի բարելավման, կարգապահության արմատացման, ՄՏ Կայանի և կոլտնտեսությունների տնտեսական աշխատանքի, գյուղատնտեսական աշխատանքի վորակի բարձրացման համար: Պետք ե ուղղակի ասել, վոր անցած տարի բազմաթիվ ղեղքերում ՄՏ Կայանների և կոլտնտեսությունների միջն պայմանագրերը կնքվում եյին անփույթ, ձեւվականորեն ենդիրն այն և, վորակազի պայմանագրերը կնքվեն ժամանակին, վորակազի ղիրեկտորները, քաղաքամարների պայմանագրերը կնքվեն:

վոչ մի դեպքում այդ գործում չափից ավելի հավատ չընծայելին ապարատի յերկրորդական անձնավորություններին, վորպեսզի պայմանագիրը կնքվի իրոք բոլոր կոլտնտեսությունների հետառանձին և ձատորեն սահմանվի ՄՏԿ-ի աշխատանքի ցուցակը վորպեսզի այդ պայմանագիրը միկնույն ժամանակ պարունակի կոլտնտեսությունների պարտավորությունների ստույգ ցուցակը՝ ձիերի ու տրակտորների համատեղ աշխատանքի ասպարիֆլում, վորպեսզի պայմանագիրն իրոք վերահսկողության յենթարկվի նրա կատարման ընթացքում, ինչպես ՄՏ Կայանի, այնպես և կոլտնտեսությունների կողմից: Պետք ե հիշել վոր այս գարնանացանի վողջ կամպանիայի խոշորագույն կազմակերպչական հարցերից մեկն ե: Այս գործին պետք ե ձեռնամուխ լինել առանց հապաղելու, վորպեսզի վոչ ուշ քան մարտի սկզբից պայմանագրերն արդեն կնքված լինեն:

ԱՅՆ, ԻՆՉ ՁԵՐԸ Ե ԲԵՐՎԱԾ, ՄԻԱՅՆ ՍԿԻԶԲՆ Ե, ՄԻԱՅՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼՆ Ե

Այս նվաճումները, այն հաջողությունները, վոր մինք ձեռք ենք բերել այս տարի և վորոնց մասին յես ղեկուցեցի ձեզ, հաջողություններ, վորոնք իրենց արտահայտությունն են գտնում գյուղատնտեսական աշխատանքների վորակի բարձրացման, հացահատիկային կուլտուրաների ու բամբակի ընդհանուր արտադրանքի աճման, կոլտնտեսականների կողմից պետության հանդեպ ունեցած իրենց պարտավորությունների կանոնավոր կատարման, յուրաքանչյուր աշխատին հասնող յեկամտի աճման, անկուսակցական կոլտնտեսականների ակտիվի հսկայական աճման, միլիոնավոր կոլտնտեսությունների գիտակցության ու կազմակերպվածության աճման մեջ, այս ամենը միայն ամենաառաջին քայլերն են: Այս հասրավորությունները, վոր ունեն մեր կոլտնտեսությունները՝ վորպես խոշոր, հանրայնացված տնտեսություններ, վորոնք իրենց աշխատանքը կատարում են մի այնպիսի հուժկութենքի միջոցով, ինչպիսին ՄՏ Կայաններն են, յեթե այդ հնարավորությունները վերցնելու լինենք իրենց ամբողջությամբ, ապա պետք ե ասել, վոր նըանք գեռնս շատ անբավարար չափով են ոգտագործված արտադրության վերելքն ստեղծելու գործում: Առաջիկա 1934 թ. գարնանացանի կամպանիայի գլխավոր իւր-

դիրը, այն ե՛ բարձրացնել բերքատվությունը, բարձրացնել դյուրականութեամբ աշխատանքների վորակը՝ անկասկած կարող ե կենսագործվել և կկենսաազորհի, յեթե բարեկավի կազմակերպչական գործնական աշխատանքը մեր ՄՏ Կայաններում, խորհացնատեսություններում ու կոլտնտեսություններում: Այս մասին բոլորեց լավ ասաց ընկ. ՍՏԱԼԻՆԸ դիմելով Դնեպրոպետրովսկի մարզի կոլտնտեսականների պատվիրակության:

«Աշխորին նույնիսկ 10—12 կիլոգրամ հացահատիկն ել դեռ քիչ ե: Ավելի շատ ե հարկավոր վաստակել և կոլտընտեսականներն ել ավելի շատ կունենան, յեթե նրանք աղնը-գորեն աշխատեն կոլտնտեսությունում: Այն, ինչ ձեռք ե բերված— դա միայն սկիզբն ե, առաջին քայլը: Պետք ե ավելին ձեռք բերել, վորպեսզի բոլորն ել կարողանան ունեոր կյանք վայելել կոլտնտեսությունները ներկյում ունեն այն ամենը, ինչ անհրաժեշտ ե ունեոր կյանքի համար: Կոլտնտեսություններն ունեն հիանալի, հողեր և այն ել այն-պիսի քանակությամբ, վորի մասին յերազել անգամ չեյին կարող կուլակները: Չե վոր այժմ առաջի ժամանակը չե, յերբ յուրաքանչյուր կտոր հողն անհրաժեշտ եր գնել և տարիներով փող կուտակել այդ գործի համար: Հողն այժմ հանրային ե, ժողովրդական, վորը հավիտյան ամրացված ե կոլտնտեսություններին: Դուք միայն աշխատեք, բեղմավորեք հողը ձեր աշխատանքով և պակասություն չեք ունենա: Այնուհետև կոլտնտեսություններն ունեն տրակտորներ, գյուղատնտեսական մեքենաներ և այն ել այնպիսի մեծ քանակությամբ, վորի մասին յերազել անգամ չեյին համարձակվի կուլակներն ու կալվածատերերը: Իսկ սրանից հետո տրակտորներ ու մեքենաներ մենք ավելի շատ կունենանք: Վերջապես կոլտնտեսություններն ունեն իրենց բանվորացյուղացիական կառավարությունը, վորը բոլոր միջոցներով, բոլոր յեղանակներով ոգնում ե գյուղացիներին: Աշխարհում չկա մեկ այլ յերկրի, ուր գյուղացիներն իրենց խորհրդային կառավարությունն ունենան, վորն ոգնություն ցույց տար ու ոժանդակեր նրանց, Միայն մեր յերկրուժ կա այդպիսի կառավարություն, վորը կոլտնտեսություններում համախմբված աշխատավոր գյուղացիներին լավագույն հոգերն ե տալիս, արակտորներ ու մեքենաներ ե տրամա-

դրում նրանց և պաշտպանում ե նրանց կեղեքիչներից ու շահագործողներից: Նշանակում ե կոլտնտեսություններն ունեն այն ամենը, ինչ անհրաժեշտ ե ունեոր կյանք վարելու համար: Նրանց անհրաժեշտ ե մեկ բան ևս—աշխատել կոլտընտեսությունում ազնվորեն, պահպանել կոլտնտեսային բարիքը: Յեկ յեթե բոլոր կոլտնտեսականները, բոլորը և վոչ թե միայն նրանց մեծամասնությունը՝ ազնվորեն աշխատեն կոլտնտեսությունում, մթերքներ կուտակվեն, կկուտակվի ամեն տեսակի բարիք և մեր յերկիրն ամենահարուստ յերկիրը կդառնա ամբողջ աշխարհում: Իսկ վորպեսզի գյուղի համար ավելի շատ ապրանքներ լինեն, դրա մասին կհոգան կառավարությունն ու կուսակցությունը: Դրանում կարող եք չտարակուսել:

Դեպի նոր հաղթանակները տանող ուղին, գարնանացանի կամպանիայի վրայով ե ընթանում: այդ պարզ ե: Խնդիրն այժմ այն ե, վոր այդ գարնանացանի կամպանիայի ընթացքում բոլոր կոլտնտեսությունները, բոլոր կոլտնտեսականները, մեր բոլոր ՄՏ կայաններն ու խորհանտեսությունները, աշխատեն այնպես, ինչ-պես այդ պահանջում ե բանվորների ու գյուղացիների մեծ առաջնորդը, մեր յերկրի մեծ վերակառուցողը, անդասակարգ սոցիալիստական հասարակության մեծ կառուցողը, համաշխարհային պրոլետարիատի մեծ առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԸ:



ԳՅՈՒՂՂՐԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ
ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ

1. Ա. ՌՈՒԽԿՅԱՆ.—Գառնածնման կամպանիայի անցկացումը	30 կ.
2. Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ.—Զերմոցներ	30 »
3. ԳՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.—Ինչպես պաշտպանել կոլտնտեսության անասունները	40 »
4. Ա. ՍԱՐԴԻՄՅԱՆ.—Վոռոգման մի քանի հիմնա- կան խնդիրները	1 ռ.
5. ԵԴ. ԴԱՎԻԹՅԱՆ.—Ընտանի կենդանիների ֆաս- ցիոնը և պայքարը նրա գեմ	40 »
6. ՊՐՈՓ. Ն. ՍՈԿՈԼՈՎ.—Հողագործության խըն- դիրները 2-րդ հնդամյակի նախորյակին	30 »
7. Ա. ԽԱՆՉՅԱՆ.—Գյուղի սոցիալիստական վե- րակառուցման հիմնական խնդիրները	30 »
8. Լ. ԲԵՐԻԱ.—Ա.ՍՖԽՀ գյուղատնտեսության հիմ- նական խնդիրները	50 »
9. Ի.Ս. Տ. ՆԵՐՍԻՅԱՆ.—Խաղողի կուլտուրան և նրա զարգացումը	8 ռ.
10. ՌՈՍՍԵԼ.՝ Բույսի սննդառությունն ու հողի բերքատվությունն	6 ռ.

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ

1. ՊՐՈՓ. Պ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ.—Բամբակենու պարարտացումը.	
2. » » » Հողի մշակությունն ու բեր- քատվության բարձրացումը.	
3. Շ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ.—Հանքային պարարտանյութերով պա- րարտացման տեխնիկան.	
4. ՊՐՈՓ. ՍՈԿՈԼՈՎ.—Ինչ ե ցանքաշրջանառությունը.	
5. ՅԱԿՈՎԼԵՎ.՝ 1934 թ. գարնանացանի կամպանիայի խըն- դիրները.	
6. Ա. ՄԱՐՈՒԽՅԱՆ.—Սշխատանքի կազմակերպումը կոլտըն- տեսություններում.	
7. Գարնան գյուղատնտեսական կամպանիայի ընթացքում անասնապահության ասպարիզում կիրառվելիք ձեռնար- կումների մասին.	

Թարգմ. Խմբագիր՝ Աշխի Ղազարյան

Տեքտ. Խմբագիր՝ Պ. Ստրայն

Մբարագրիչ՝ Առաջարյան

Հանձնվել ե արտադրության 1934 թ. փետրվարի 7-ին

Մարտագրիչ՝ տպագրելու 1934 թ. փետրվ. 11-ին

Գլուխութ. № 62

Տիրագ. 2000

Գատվ. № 88

ԳԻՆ 20 4.



ЯКОВЛЕВ

Основные задачи сельхоз. кампании 1934 года

(Из речи произнесенной на 4-ой сессии ЦИК СССР)

Сельхозгиз

1934

Эривань

ՀՀ Ազգային գրադարան



NL0203791

29. 972